Տեղեկատվություն

ՀՀ Շիրակի մարզի առողջապահության և սոցիալական

ոլորտում 2024 թվականին

իրականացված աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործում է թվով 25 բժշկական հաստատություն, որոնցում ծավալված մահճակալների թիվը 513 է, աշխատակիցների թիվը՝ 2027 ։

2024 թվականի ընթացքում վճարովի ծառայությունների դիմաց ստացված եկամուտների գումարը կազմել է 1 440700.0 հազ. դրամ ։ 2023 թվականի համեմատ /1 312717.3 հազ. դրամ/ ավելացել է 127 982.7 հազ. դրամով:

Դեկտեմբեր ամսվա ֆինանսավորումից հետո ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության բժշկական կազմակերպությունները դեկտեմբերի 20-ի դրությամբ չունեն աշխատավարձի գծով պարտքեր: Բժշկական կազմակերպությունների կրեդիտորական պարտքերը ընթացիկ գործունեության պարտքեր են՝ կոմունալ ծառայության, դեղորայքի, բժշկական նոր և ժամանակակից սարքավորումների ձեռք բերման հետ կապված ծախսեր /լիզինգ, վարկ/:

ՀՀ Շիրակի մարզում 2024 թվականին գրանցվել է 2496 ծնունդ, նախորդ տարվա համեմատ /2703/ այս ցուցանիշը նվազել է 207-ով ։

2024 թվականին մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններին տրամադրված պետական պատվերի ֆինանսավորումը կազմել է 6 698 484.7 հազ. դրամ, 2023 թվականի համեմատ /6 115 377.9 հազ.դրամ/ ավելացել է 583 106.8 հազ. դրամով:

2023 թվականի դեկտեմբերին «Անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրերի» շրջանակում շենքի մասնակի վերանորոգման նպատակով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է 163181.2 հազ.դրամ գումար: Վերանորոգման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին, այս պահին ավարտական փուլում են: 2024 թվականի ընթացքում մարզի բժշկական հաստատություններում սեփական միջոցների հաշվին իրականացվել են 5138.1 հազ. դրամի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա», «Գյումրու Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» « Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա», «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն»,

«Արթիկի Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ներում, և «Ազատանի բժշկական ամբուլատորիա»ՊՈԱԿ-ում:

2024 թվականի հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության բժշկական հաստատությունները հագեցվել են ժամանակակից բժշկական սարքավորումներով, մասնավորապես.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ –ն ԱԳԲԱ լիզինգ վարկային կազմակերպության միջոցով ձեռք է բերել 177000.0 հազ.դրամ արժողությամբ 64 սլայս հզորությամբ արհեստական բանականությամբ համակարգչային տոմոգրաֆ՝ անգիոգրաֆիկ և բոլիսային հետազոտության հնարավորություններով, ունի ճառագայթման մինիմալ դոզավորում և հետազոտության համեմատաբար կարճ միավոր ժամանակահատված:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում վարձակալական հիմունքներով Արմա Մաքս ՍՊԸ-ն տեղադրել է Siemens MagnetomAmira 1.5T հզորությամբ իր տեսակի մեջ եզակի բարձրադաշտ մագինսառեզոնանսային սարք՝ օժտված վերջին սերնդի արհեսական բանականության ողջ գործիքակազմով: Սարքը հագեցած է բազմապրոֆիլ ծրագրերով (նևրոլգիա, օնկոլոգիա, ոսկրամկանային համակարգ, որովայնի և կոնքի օրգաններ): Սարքը հնարավորություն է տալիս հետազոտություններ իրականացնել ինչպես մեծահասակ, այնպես էլ 0-18 տարեկան պացիենտներին, այդ թվում նորածիններին, ինչը ներկայումս հասանելի է միայն երևանյան եզակի կլինիկաներում: Սարքի հզորությունը բերում է վերջինիս գերարագ աշխատանքին՝ կրճատելով հետազոտություն ժամանակը 1.5 անգամ առանց որակի աղավաղման բարձրացնելով պացիենտի կոմֆորտը և հետազոտման անարդյունավետությունը: Սարքի շնորհիվ մարզում գործող գլխուղեղի կաթվածի ծրագիրը իր էֆեկտիվությամբ մոտեցվում է մայրաքաղաքում գործող չափորոշիչներին:

ՀՀ Շիրակի մարզպետի միջնորդությամբ ՀՀ առողջապահության նախարարություն կողմից «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին տրամադրվել է 15500.0 հազ. դրամ արժողությամբ շարժական թվային ռենտգեն սարք: Ռենտգեն սարքի կարիք ունի նաև «Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ն , որի համար ևս դիմել ենք ՀՀ առողջապահության նախարարություն:

ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 12-ի թիվ 488-Ն որոշմամբ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում «Բուժական գործ» մասնագիտությամբ ՀՀ Շիրակի մարզին տրամադրվել է նպատակային ուսուցման 4

տեղ: Թվով 10 դիմորդի տրամադրվել է տեղեկանք նպատակային տեղերի մրցույթին մասնակցելու նպատակով:

Հենաշարժողական, աղեստամոքսային համակարգի խնդիրներ ունեցող թվով 19 երեխայի տրամադրվել է Ջերմուկ «Արարատ» մոր ու մանկան առողջարանի ուղեգիր:

ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 14-ի «Առողջապահության նախարարի 2022 թվականի մարտի 31-ի թիվ 1331-Լ հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 809-Լ հրամանի համաձայն «Գյումրու բժշկական կենտրոն», ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա», « Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» և «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ներում իրականացվել է կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման ծրագիրը, որի տարեկան ֆինանսավորումը կազմել է 1500.0 հազ.դրամ:

ՀՀ Շիրակի մարզի բժշկական հաստատություններում հաշվառվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված **2923** քաղաքացի, դեղորայք տրամադրվել է **418** քաղաքացու, ստացիոնար բուժման ուղեգիր տրամադրվել է **183** քաղաքացու, 27 հղի ծննդաբերել է մարզի ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում:

2023 թվականի ընթացքում ստացվել է ՀՀ վարչապետին ուղղված և ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ վերահասցեագրված, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզպետին ուղղված ընդհանուր թվով 1881 քաղաքացու դիմում: Ուսումնասիրվել և քաղաքացիների սոցիալական խնդիրների վերաբերյալ ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի քննարկմանն է ներկայացվել դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ 1404 եզրակացություն: ՀՀ Շիրակի մարզպետի որոշումներով ֆինանսական օգնություն է ստացել 1093 քաղաքացի:

2024 թվականի ընթացքում ստացվել է ընդհանուր թվով 1675 քաղաքացու ֆինասական օգնության վերաբերյալ դիմում: Ուսումնասիրվել և ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի քննարկմանն է ներկայացվել դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ 1314 եզրակացություն: ՀՀ Շիրակի մարզպետի որոշումներով ֆինանսական օգնություն է ստացել 971 քաղաքացի:

2024 թվականի ընթացքում տարածքային հաշվառման է վերցվել և ուղարկվել կենտրոնացված հաշվառման առանց ծնողական խնամքի մնացած 15 երեխայի

անձնական գործ, 2023–ին 18 երեխայի անձնական գործ։ Տվյալները մուտքագրվել են «Նորք» տեղեկատվավերլուծական համակարգի «Մանուկ» ենթահամակարգ։

2024 թվականի ընթացքում մանկատուն է ընդունվել 5 երեխա, 2023–ին 10 երեխա։

2024 թվականի ընթացքում բազմամասնագիտական խումբը խնամատար ընտանիքներ կատարել է 35 տունայց, 2023–ին 35 տունայց։

2024 թվականի ընթացքում բացահայտվել է հանրակրթությունից դուրս մնացած 4 երեխա, իրականացված աշխատանքների արդյունքում 3 երեխա վերադարձել է հանրակրթություն, 2023–ին 28 երեխա, 8–ը վերադարձել է հանրակրթություն։ Կանխարգելվել է 5 երեխայի հանրակրթությունից դուրս մնալը։ Նրանք շարունակում են ուսումը պետական քոլեջում։

2024 թվականի ընթացքում հաշվառվել է 13 որդեգրողի թեկնածու, նախորդ տարի՝ 8։ Տվյալները մուտքագրվել են «Նորք» տեղեկատվավերլուծական համակարգի «Մանուկ» ենթահամակարգ։ Որդեգրողի թեկնածուների համար, համակարգից երեխա ընտրելու նպատակով ընթերցվել է որդեգրման ենթակա երեխաների շտեմարանը։ Ընտրված երեխաների հետ համադրում իրականացնելու նպատակով գրություններ են ուղարկվել ՀՀ պետական լիազոր մարմնին։

Հաշվառվել է որդեգրման ենթակա 4 երեխա։ Տվյալները մուտքագրվել են «Նորք» տեղեկատվավերլուծական համակարգի «Մանուկ» ենթահամակարգ։

2024 թվականի ընթացքում խնամատար ծնող չի հաշվառվել։ 2023 թվականին հաշվառվել է 5 խնամատար ծնող։ Սակայն 2024 թվականի ընթացքում նախորդ տարվա 4 խնամատար ընտանիքի 7 երեխայի փոխարեն 5 ընտանիքում խնամք և դաստիարակություն է ստանում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 8 երեխա։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Լ.ԱՍԼԱՆՅԱՆ